ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունու
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Արձակ երկերի ուսուցման առանձնահատկություններն ավագ դպրոցում (ըստ Գրիգոր Զոհրապի « Երջանիկ մահը» նորավեպի)

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Վարդենիս

ՂԵԿԱՎԱՐ՝ Բեյբության Հասմիկ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Ասոյան Իրինա

ԴՊՐՈՑ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ՎԱՐԴԵՆԻՍ - 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն……4

2. Գրական ակնարկ……..6

3. Փորձարարական վերլուծություն……9

3.1. Խմբի նկարագիրը……9

3.2. Փորձարարական դաս-1…… 10

3.3. Փորձարարական դաս-2……13

4. Վերլուծություններ……20

5. Վերջնարդյունքներ……25

6. Օգտագործված գրականության ցանկ……26

7. Հավելված……27

Դասի պլան – 1……27

Դասի պլան – 2……31

Իր գործունեության ձևերեն այն, զոր ամենեն ավելի հրայրքով, հեշտանքով կկատարեր, գրականությունն էր: Կպաշտեր գրականությունը:

Ա. Չոպանյան

Ես Գրիգոր Զոհրապին ճանաչում էի հեռվեն, կարդացել էի նրա գեղեցիկ պատմվածքները Կ.Պոլսի կյանքից: Ուղղությամբ ռեալիստ էր, ուներ շատ սիրուն ոճ, միանգամայն զերծ պոլսական սեթևեթանքից և ավելորդ հակագեղարվեստական պչրանքից:

Ալ. Շիրվանզադե

1880-90-ական թվականներին արևմտահայ գրականությունը զարգացման նոր ծիր էր մտել: Երիտասարդ սերունդը՝ համախմբված «Արևելք», «Մասիս» և «Երկրագունտ» պարբերականների շուրջ, գրականության մեջ հետևողականորեն զարգացնում էր իրականության ռեալիստական արտացոլման ուղղությունը: Գր. Զոհրապը դարձավ այդ շարժման աչքի ընկնող դեմքերից մեկը, իսկ նրա ստեղծագործությունը՝ հայ գրականության ակնառու նվաճում: Գր. Զոհրապը իր ժամանակակիցներից տարբերվում էր նյութի ընտրության և այն ներկայացնելու ինքնատիպ մոտեցումներով: Նա կարևորում էր բուն կյանքի այն կողմերը, երևույթները, որոնք գուցեև կենցաղային կամ անհատական բնույթ ունեն, բայց ճակատագիր են որոշում և վերաձևակերպվում որպես կյանքը խեղաթյուրող իրողություններ: Գրողը հասարակական բարքերը «վերաշինելու» խնդիր էր լուծում: Գր. Զոհրապի ստեղծագործությունների մի կարևոր հատված վերաբերում է կնոջ էության և սիրո հոգեբանության վերլուծություններին: Առաջին անգամ հայ գրականության մեջ կինը գտնում է իր գեղագետ մեկնաբանին: Նրբաճաշակ և նրբանկատ արվեստագետը կարողանում է թափանցել կնոջ հոգեբանական տարածք և բացահայտել այլոց կողմից չնկատվող և չգնահատվող գեղեցկություններ:

«Երջանիկ մահը» այդպիսի նորավեպերից է:

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գեղարվեստական գրականությունը, ինչպես և արվեստի մյուս տեսակները, իրականության ճանաչման, արտացոլման ձևերից է, խոսքի արվեստ, որը արվեստի այլ տեսակների հետ բավարարում է մարդու հոգևոր պահանջմունքները: Խոսքի միջոցով իրականությունը՝ անցյալ, ներկա, ապագա, ներկայացվում է պատկերային համակարգով ավելի տեսանելի ու հոգեբանորեն ավելի ազդեցիկ, քան որևէ հասարակական գիտություն: Հայտնի է, որ գեղարվեստական գրականությունը իրականացնում է երկու կարևոր գործառույթ՝ դաստիարակչական և ճանաչողական. երկում ծավալվող գործողությունները և դրանց ընթացքում կերպարների դրսևորած վարքագիծը իրենց անմիջական արձագանքն են գտնում դեռահասի ներաշխարհում և հաճախ ուղղորդող դեր են խաղում: Մյուս կողմից էլ գեղարվեստական գրականությունը տարաբնույթ գիտելիքների շտեմարան է, ժամանակները, դեպքերն ու դեմքերը ճանաչելու կարևոր միջոցներից մեկը: Այս տեսակետից շատ սերտ է գրականության և պատմության կապը. մեկը պատկերների միջոցով ցույց է տալիս, իսկ մյուսը թվերի ու փաստերի օգնությամբ ապացուցում է, և երկուսն էլ….համոզում են (Էդ.Ջրբաշյան, Գրականության տեսություն, Երևան, 1972):

Գեղարվեստական գրականության հասարակական դերի ու նշանակության մասին մեր պատկերացումները հանգեցնում են այն գաղափարին, որ գրականությունը աշխարհայացքային նշանակություն ունի և շատ կարևոր է դեռահասի արժեհամակարգային կողմնորոշման տեսակետից: Ուսումնառության վերջնարդյունքում աշակերտը դպրոցն ավարտում է որպես գիտելիքներով զինված, որոշակի աշխարհայացք և արժեհամակարգ ունեցող կայացած անհատականություն: Բնականաբար գրականության դասընթացն ինչքան համակարգված ու համակողմանի լինի, այնքան արդյունավետ կլինի չափորոշչային պահանջների կատարման ընթացքը:

Միջին դասարանների գրականության դասընթացում որոշակի գիտելիքներ տրվում են գրական սեռերի, ժանրերի, գրական ստեղծագործությունների դիպաշարի ու բովանդակության, վերլուծության սկզբունքների. պատկերավորման

միջոցների և լեզվական առանձնահատկությունների մասին: Ստեղծվում են հիմքեր նշված իրողությունների առավել գիտական ուսումնասիրության համար, որն իրագործվում է արդեն ավագ դպրոցում: Ուսումնառության այս հատվածում սովորողները, ըստ էության, ուսումնասիրում են հայ գրականության պատմություն՝ ժամանակագրական հաջորդականությամբ, համակարգված ու խորացված: Գերագույն նպատակը ոչ միայն սովորողին հայոց գրապատմական ընթացքի և գրականագիտական իրողությունների վերաբերյալ գիտելիքներ տալն է, այլև հայ ժողովրդի գեղարվեստական մտածողության համամարդկային մարդասիրական որակների բացահայտումը և այդպիսի որակներ ունեցող հայ մարդու դաստիարակությունը:

Գրական ստեղծագործությունների ուսուցումը ավագ դպրոցում մի գործընթաց է, որի ընթացքում ներկայացվում և վերլուծվում են ստեղծագործության սյուժեն, բովանդակությունը, կերպարները, կատարվում են լեզվաոճական դիտարկումներ, և այդ ամենը ամրակայելու, յուրացնելու, գնահատելու համար անհրաժեշտ է կիրառել թե՛ ավանդական, թե՛ նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներ:

Գր. Զոհրապի ստեղծագործությունը հայ գրականության պատմության կարևորագույն օղակներից է թե՛ նյութի ընտրության, թե՛ այդ նյութի գեղարվեստականացման առումով: Մյուս կողմից էլ հնարավորություն է տալիս հարաբերվելու արևմտահայերենի լեզվական առանձնահատկությունների հետ՝ բառապաշար, քերականական կառուցվածք, ոճական-արտահայտչական հատկանիշներ:

Այս հետազոտական աշխատանքում Գրիգոր Զոհրապի նորավեպի օրինակով փորձ ենք անում ներկայացնել այն սկզբունքներն ու մեթոդները, որոնց օգնությամբ հնարավոր է կատարել գրական նմանատիպ ստեղծագործությունների համեմատաբար համակարգված ու լիարժեք ուսումնասիրություն: Սակայն պետք է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր ստեղծագործություն ունի իր բնորոշ առանձնահատկությունները, ուստի մեր կողմից ներկայացված սխեման միայն ընդհանուր բնույթ ունի:

2. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Որևէ գրական արձակ ստեղծագործություն ուսուցանելու համար անհրաժեշտ է մանրամասնորեն ուսումնասիրել տեքստը, մշակել և ձևակերպել նրա ուսումնասիրման սկզբունքները: Մասնավորապես նպատակահարմար է տեքստի ուսումնասիրությունը իրականացնել այնպիսի սկզբունքներով, որոնք թույլ կտան բացահայտելու ստեղծագործության գաղափարական- բովանդակային միտվածությունը, հեղինակի նպատակադրումը, լեզվաոճական ու դրանով պայմանավորված գեղարվեստական առանձնահատկությունները և, որն ամենակարևորն է, կօգնի ընթերցողներին անհատական մոտեցում ու վերաբերմունք ցուցաբերելու թե՛ ժամանակաշրջանի, թե՛ հասարակական միջավայրի ու ընկալումների, թե՛ կերպարների նկատմամբ՝ միաժամանակ երևույթները գնահատելով արդիականության տեսանկյունից: Մասնավորապես մենք առանձնացնում ենք հետևյալ սկզբունքները, որոնք, մեր կարծիքով, հնարավորություն են տալիս իրականացնելու գեղարվեստական երկի համեմատաբար ամբողջական վերլուծություն:

1.Լեզվաոճական վերլուծության սկզբունք	2.Բովանդակային վերլուծության սկզբունք	3.Տեքստի ընկալումը խթանող սկզբունք
ա)Տեքստի բառապաշարի քննություն, բառագիտական, բառակազմական վերլուծություններ:	ա)Դեպքերի, գործողությունների զարգացման ընթացքի, հերոսների արարքների վերլուծություն, դրանց իրականացման լեզվաոճական միջոցների մեկնաբանություն:	ա) Զգայական- զգացական վերլուծություններ՝տեսողական պատկերներ, լսողական զգայություններ, կինեսթետիկ զգացողություններ:
բ) Տեքստում առկա քերականական կառույցների վերլուծություն. խոսքի մասերի, դրանց քերականական հատկանիշների, նախադասությունների և դրանց անդամների կա-	բ) Դեպքերի, հերոսների արարքների դրդապատճառների, շարժառիթների բացահայտում և հոգեբանական մեկնաբանություն:	բ)Տեքստում նկարագրվող դեպքերի ներքին կապերի ու պայմանավորվածությունների մեկնաբանություն:

պակցման եղանակնե-րի համակողմանի վեր-լուծություն:		
գ) Նախադասություն-ների, պարբերություն-ների կապի տեսակների վերլուծություն. Նախա-դասությունների տրա-մաբանական հաջոր-դականություն, տեքստի սկզբի, ընթացքի և ավարտի ընկալում՝ ըստ կերպարների յուրա-հատկությունների:	գ) Նովելի կառուց-վածքը՝ որպես իրական պատմության ցուցիչ:	գ) Հերոսների զգացմունք-ների արդիականության ներկայացում անհատական ընկալմամբ:
դ) Ոճական – արտա-հայտչական վերլուծու-թյուն. պատկերավոր-ման միջոցների տարբե-րակում, բառի ուղիղ և փոխաբերական իմաստներով կիրա-ռությունների, խոսքի ոճերի տարբերակում:		դ) Երջանկության անհա-տական ընկալման առանձ-նահատկությունների ներ-կայացում:

Գեղարվեստական ստեղծագործության վերլուծությունը նախևառաջ նպատակահարմար է իրականացնել

ա) ինդուկցիոն մեթոդով՝ բաղադրիչ մասերից → ամբողջական միավոր ընթացքով, այսինքն՝ բառ → նախադասություն → պարբերություն → տեքստ,

բ) դեդուկցիոն մեթոդով՝ ամբողջից մասերի քննություն, այսինքն՝ տեքստ → պարբերություն → նախադասություն → առանձին բառերի բացատրություն, մեկնաբանություն:

Ինդուկցիան (լատ.inductio-մակածում) մտածողության մեթոդ է, որի կիրառումը հետազոտողին օգնում է բացահայտելու ուսումնասիրվող

նյութի բովանդակության տրամաբանությունը, ինչպես նաև նրա դինամիկան: Դա կատարվում է մասնավորից դեպի ընդհանուրը տանող ուղիով: Այս մեթոդը շատ օգտակար է կիրառել հատկապես գործնական առաջադրանքներ կատարելու համար մաթեմատիկայի, ֆիզիկայի ուսուցման ընթացքում:

Այս մեթոդի էությունն այն է, որ մասնավոր դեպքերից կատարվում են ընդհանրացումներ, ինչը բնորոշ է տվյալ երևույթին: Օրինակ՝ ուսումնասիրելով առանձին մարդկանց հոգեբանությունը, ձգտումները, բարոյական վարքագիծը, պահանջմունքների բնույթը, պարզ է դառնում, որ մարդուն բնորոշ են հոգեբանական և բարոյական վարքագծի մի շարք սկզբունքներ, որոնք ընդհանրական են բոլորի համար: Մակածության մեթոդը կիրառելի է ցանկացած երևույթի ճանաչողության համար (ՀՍՀ, 4, 1978, էջ 341):

Դեդուկցիան (լատ. deductio –արտածում, նվազեցում) մտածողության մեթոդ է, որի հետևանքը տրամաբանական եզրակացությունն է, որում ընդհանուր եզրակացությունից բխում է որոշակի եզրակացություն. հիմնավորման շղթա, որտեղ հղումները (պնդումները) կապված են տրամաբանական եզրակացություններով:

Եթե նվազեցման նախադրյալները ճշմարիտ են, ապա դրա հետևանքները նույնպես ճշմարիտ են: Դեդուկցիան տրամաբանական ապացույցների հիմնական միջոցն է, ինդուկցիայի հակառակը:

Դեդուկտիվ մեթոդը զարգացնում է սուբյեկտի վերացական մտածողությունը, արագացնում ուսումնասիրության ընթացքը: Տեսական, գործնական առաջադրանքներ կատարելիս օգնում է հայտնաբերել պատճառահետեւանքային կապեր: Բացահայտում է նյութի բովանդակության տրամաբանությունը՝ ընդհանուրից դեպի մասնավորը տանող ուղիով: (ՀՍՀ, 3, 1977, էջ 324): Ինչպես նշեցինք, այս մեթոդը մակածության հակառակ գործընթացն է. ընդհանրական հատկանիշների բացահայտումից հետո ուսումնասիրվում են դրանց դրսևորումները մասնակի դեպքերում: Ըստ մակածության մեթոդի՝ ընդհանրականից պետք է հանգել մասնավորին:

Այս մեթոդների կիրառությունը գեղարվեստական երկերի վերլուծության ժամանակ հնարավորություն են տալիս մասնավոր, կոնկրետ փաստերից կատարել ընդհանրացում և վերացարկում՝ այդպես արժևորելով ստեղծագործության գեղարվեստական արժանիքներն ու գաղափարական միտվածությունը: Դետալային վերլուծությունների ժամանակ կարող են օգտագործվել վերլուծության այլ կոնկրետ մեթոդներ:

3.ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1. ԽՄԲԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանում, քանի որ հետաքրքիր էր այս դասարանի աշակերտների հետ կատարել արևմտահայերենով գեղարվեստական արձակ երկերի վերլուծություն:

Այս դասարանում սովորում են 23 աշակերտ՝ 11 տղա և 12 աղջիկ, որոնք ունեն տարբեր առաջադիմություն և հմտություններ, տարբեր հայացքներ ու մոտեցումներ այս կամ այն հարցի վերաբերյալ: Հայ գրականություն անցնում են շաբաթական 2 ժամ: Դասացուցակում այն տեղադրված է 2-րդ և 3-րդ ժամերին: Արևմտահայերեն տեքստեր այս դասարանի աշակերտների հետ ուսումնասիրել ենք նաև նախորդ դասարաններում՝ կապված արևմտահայ հեղինակների ստեղծագործությունների ուսումնասիրության հետ, այսինքն՝ նրանց ծանոթ են արևմտահայերենի հնչյունական և բառապաշարային որոշ առանձնահատկություններ, ուստի շատ լավ գիտեմ յուրաքանչյուր երեխայի հմտություններն ու կարողությունները հայ գրականությունից և արևմտահայերենից: Ինձ համար հետաքրքիր էր փորձարկել տեքստի ուսումնասիրությունը նշված մեթոդներով, որոնք հնարավորություն են տալիս աշակերտին ազատ և ինքնուրույն մտածել, վերլուծություններ անել, սեփական կարծիքը հայտնել, պատասխանատու որոշումներ կայացնել, ինքնուրույն կողմնորոշվել հմտությունների զարգացման և ճանաչողական գործընթացում:

3.2. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ – 1 (1 դասաժամ)

Ինդուկցիոն մեթոդով քննարկվում են անծանոթ բառերը, բացատրվում, վերլուծվում, քննվում են տվյալ բառի կապը մյուս բառերի հետ: Ենթարկվում են բառակազմական վերլուծության (արմատ, ածանց, վերջավորություն), նոր բառեր են կազմվում այդ արմատներով և ածանցներով: Կատարվում է բառի ձևաիմաստային վերլուծական աշխատանք. տրված բառը փոխարինել իր հոմանիշով՝ փոփոխության արդյունքը բովանդակության մեջ տեսնելու: Քննարկվում է լեզվաբանական մակարդակով: Ընտրվում են տեքստի հիմնական միտքն արտահայտող նախադասությունները, վերլուծվում են ձևաբանորեն և շարահյուսորեն (իրականացվում է միջառարկայական կապ):

Օրինակ՝Գրիգոր Զոհրապի << Երջանիկ մահը >> նովելը ուսումնասիրելիս վերլուծությունն այնպես պիտի կատարել, որ բացահայտվեն հեղինակի մտադրությունները: Մասնավորապես ինչպես ինքն է ասում.

<< Այս կյանքին բոլոր հորինվածքները կը քայքայեմ մեկիկ-մեկիկ, ջիղերը կը զննեմ, երակները կը բանամ ու,ինչ որ անհնար կը թվի ձեզի, իր հոգին կը գտնեմ ու կը վերլուծեմ…>>,- ասել է հեղինակը:

Նախքան նորավեպի ուսուցմանն անցնելը դասը սկսվում է երեքրոպեանոց զրույցով՝ նշելով, որ կնոջը ճանաչելու, նրա հոգեբանությունը հասկանալու հարցերը միշտ էլ հետաքրքրել են գեղագետներին, հոգեբաններին, գրողներին, փիլիսոփաներին, այդ թվում նաև Գր. Զոհրապին՝ ասելով, որ « առաջին անգամ հայ գրականության մեջ կինը գտնում է իր գեղագետ մեկնաբանին, արվեստագետի, որ ճանաչում և հասկանում է նրա բառի, նայվածքի, ժպիտի, ձեռքմեկնումի և ձեռքսեղմումի…, սրտատրոփի ու հևոցի այնպես նուրբ ու չնկատվող գեղեցկությունները…» (Կարլեն Դանիելյան, Գրիգոր Զոհրապ, Երևան, 1989, էջ 11): Սակայն առեղծվածային կինն անբացատրելի է մնացել, ուստի Հայկ Խաչատրյանի հետևյալ միտքը ընտրվում է որպես բնաբան դասի համար.

<< Տիեզերքի խորամանկ ժպիտն է կինը, որից գլուխ չեն հանում ո՛չ մարդիկ, ո՛չ էլ նույնիսկ իրենք՝աստվածները…>> (Հայկ Խաչատրյան, Արտաշես, Երևան, 1980):

Ուսումնասիրությունն սկսվում է վերնագրից. «մահը մահ է, «երջանիկ մահ» կապակցությունը՝ երկու հակադիր եզրերի միացումով», կարող է պարադոքսալ և «տարօրինակ թվալ» (Հայոց լեզու և գրականություն, 6.2010, էջ 8): Որոշվում է երջանիկ և մահ բառերի խոսքիմասային պատկանելությունը:

ածական գոյական

Օգտագործելով մտագրոհի մեթոդը՝ փորձում ենք բացատրություններ գտնել «երջանիկ մահ» արտահայտություն-կապակցության համար: Այնուհետև սկսվում է նորավեպի ուսումնասիրությունը՝ վերնագրին և նրան տրված բացատրություններին նորից անդրադառնալու նկատառումով (աշակերտներին հանձնարարված էր նախօրոք կարդալ նորավեպը՝ վերլուծությունն ավելի դյուրին և արդյունավետ դարձնելու նպատակով):

Դասարանը բաժանվում է 4 խմբի և յուրաքանչյուր խմբի հանձնարարվում է աշխատել ծրագրված պլանով: Կիրառվում է հետազոտական մեթոդը՝ զուգահեռելով միջառարկայական և ներառարկայական կապերը (քայլ առ քայլ պետք է թափանցել հեղինակի աշխարհը):

Առաջին խմբի աշխատանքն է նովելի առաջին մասից գտնել վերնագրին համապատասխան հոմանիշ բառակապակցություններ (քաղցր մահ, գեղեցիկ մահ), նախադասություններ (… Մահերեն ամենեն հեշտն էր), կատարել նաև ոճական մեկնաբանություն՝ մահ բառը քանի՞ անգամ է գործածվել և ինչու՞(6 անգամ):

« Որն էր հազար տեսակ մահերուն ամենեն քաղցրը…», «գեղեցիկ մահ», «ամենեն քաղցր մահը տեսա…», « երջանիկ մահ», « մահվան դեմ», « մեկ հատիկ մահն էր ասիկա…»:

Երկրորդ խմբի առաջադրանքն է առաջին պարբերության հիման վրա ներկայացնել բժիշկ Վահանյանին:

<<Տոքթոռ Վահանյան սովորական բժիշկ մը չէ.մարմնի հիվանդություններուն չափ ու հոգիի ցավերուն հետամուտ, հետաքրքիր բժիշկն է անիկա:

Իր հմտության մեծությունը՝ չոր ու ցամաք ապառաժի զանգվածին չի նմանիր բնավ, այլ դալար դաշտավայրի մը ծիծղուն երևույթը ունի:Վաթսունի մոտ, մազը մորուքը ճերմկած , տկարակազմ, բայց զվարթախոս մեկն է տոքթոռը:

Մահվան դեմ՝ իր քառասուն տարվան բժիշկի մղած պայքարովը, մտերմություն մը հաստատած է կարծես անոր հետ.անոր ամեն դավերը ու խաղերը գիտե.անոր զարհուրելի , երբեմն հանկարծահաս ու երբեմն համեցող հարվածներուն բոլոր գաղտնիքները ուսումնասիրած է>>:

Այստեղ աշակերտների ուշադրությունը հրավիրվում է վերն ընդգծված նախադասությունների և արտահայտությունների վրա՝ ասելիքը ըմբռնելու համար:

Երրորդ խմբին հանձնարարվում է ուսումնասիրել երկրորդ պարբերությունը, որն սկսվում է բժշկի հիշողություններով. բժշկի տունն է , երեկո: Հավաքվել են նրա մերձավորները՝ մտավորական մարդիկ: Խոսք է բացվում այն մասին , թե որն է<<հազար տեսակ>>մահերից ամենից քաղցրը: Տարբեր կարծիքներ են հայտնվում, վեճը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև բոլորին ուշադիր լսող բժիշկը վերհիշում է տասը տարի առաջ՝ իր գործունեության ընթացքում, կատարված մի դեպք:

Ուշադրություն է դարձվում ստորոգյալներին, որոնք հիմնականում բաղադրյալ են: Սրանք ավելի պատկերավոր և արտահայտիչ են դարձնում խոսքը.

բժիշկ մը չէ, բժիշկն է, ընդարձակ է , միտք մը չէ, մեկն է, հաստատած է, ո՞րն էր աղջիկ մը, գնտակն էր, մահն էր, հեշտն էր, երջանիկն էր և այլն:

Եվ այսպես բովանդակությունը բացահայտվում է պարբերություն առ պարբերություն:

Հեղինակի ոճի առանձնահատկության ուսումնասիրությունը հանձնարարվում է չորրորդ խմբին. խոսքը սեղմ է, իրադարձություններով ոչ

հարուստ, կա մեկ միջադեպ՝ անանուն հերոսուհու վերջին պարը սիրած երիտասարդի հետ և հանկարծակի մահը նրա գրկում՝ որպես այդ կնոջ կյանքի վերջին աստեղային պահ: Մնացածը՝ դեպքի նախապատմությունը՝ քառասնամյա կնոջ անցած կյանքի համառոտ ամփոփումը՝ ընդհանուր գծերով, ֆոն է հիմնական պատմության համար:

Գրառումները կատարվում են գրականության տետրերում, և յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը:

Կատարվում է դասի ամփոփում՝ հիմնվելով տեքստի վերլուծության վրա. սեղմ ծավալի մեջ Զոհրապն ստեղծել է կյանքի տոնական ու խանդավառ մի գեղեցկություն, որ այդ կնոջ կերպարն է՝ կյանքի հանդեպ ունեցած իր յուրօրինակ վերաբերմունքով, և կյանքի ողբերգության մի յուրահատուկ պատկերացում, որ երջանիկ մահվան փիլիսոփայությունն է:

Ուշադրություն է դարձվում նաև նորավեպի կառուցվածքին (ուսուցչի ուղղորդմամբ), որը կոմպոզիցիոն շրջանակ է. բժշկի հիշողությունների միջոցով պատմվում է նորավեպը:

Հանձնարարվում է տնային առաջադրանք՝

1. Ուշադրություն դարձնել նորավեպի բովանդակությանը և ասելիքին:
2. Գրել կարծիք՝ «Ի՞նչ եմ մտածում հերոսուհու կենսակերպի վերաբերյալ» վերնագրով:

3.3. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ – 2 (1 դասաժամ)

Այս դասն անցկացվում է դեդուկցիայի մեթոդով:

Դեդուկցիայի դեպքում հակառակն է՝ տեքստ → պարբերություն → նախադասություն → բառ:

Այսպես, տեքստի բովանդակային վերլուծությունն սկսվում է կարդացածի կամ լսածի նորովի վերարտադրությամբ՝ համապատասխան մեղեդու, նկարազարդման, գունավորման միջոցով: Գիտական տեքստի դեպքում սովորաբար կազմվում են աղյուսակներ, գծապատկերներ: Այս աշխատանքը պայմանականորեն կարելի է անվանել «Տեքստի թարգմանություն», որի ժամանակ աշակերտը, նախ, իր ընկալածի ընդհանրական զուգորդական պատկերն է տալիս:

Հաջորդ քայլին տեքստը բաժանվում է մասերի, առանձին մասերի համար կազմվում են հարցեր և պլան, գտնվում են նրանց հիմնական նախադասությունները կամ բանալի բառերը:

Նորից կատարվում են այլ նպատակ հետապնդող բառային, քերականական, լեզվառճական մեկնաբանություններ, որոնք հնարավորություն են տալիս հասկանալ և' տեքստը, և' ենթատեքստը (գլխավոր նպատակն է դա), դրանց միջոցով՝ հերոսների արարքների դրդապատճառներն ու շարժառիթները:

Այսպես, <<Երջանիկ մահը>> նորավեպը վեցէջանոց պատում է՝բաժանված չորս գլուխների, որոնցից ամեն մեկը ինքնուրույն տեղ ունի նորավեպի կառուցվածքում:

Քննարկվում են տնային աշխատանքները:

Աշակերտները նորից աշխատում են խմբերով (4 խումբ):

Առաջին խումբը ուսումնասիրում է առաջին գլուխը, որը նախադրության դեր է կատարում:

Երկրորդ գլխում, որն ուսումնասիրում է 2-րդ խումբը, ներկայացվում է այն դեպքի նկարագրությունը, որ տեղի է ունեցել անանուն հերոսուհու տանը կազմակերպված մի երեկույթի ժամանակ: Հանկարծ, ըստ Զոհրապի նախասիրած պատմելաձևի, վերհուշը շեղվում է բուն ընթացքից և պտտվում կնոջ կենսակերպի ու հոգեբանության շուրջն ընդհանրապես:

Երրորդ գլխում, որն ուսումնասիրում է 3-րդ խումբը, նկարագրվում է երեկույթի «ամենեն ցնծահույզ վայրկյանը»՝ պարային մասը՝ շեշտը դնելով տանտիրուհու և նրա սիրած երիտասարդի զուգապարի վրա, որն իրադարձության բարձրակետն է: Քանի որ դասն անցնում է համակարգչային դասարանում, ուստի կարելի է, օգտագործելով դիտման մեթոդը, դիտել նման զուգապարեր՝ հասկանալու համար

և՛ պարը, և՛ պարի թողած հոգեբանական ազդեցությունը կերպարի տրամադրության վրա:

Չորրորդ գլուխը հանգուցալուծման պահն է :Պարի ընթացքում սրտի կաթվածից մահանում է հերոսուհին: ՍԱ Է, ԸՍՏ ՀԵՂԻՆԱԿԻ, ԵՐՋԱՆԻԿ ՄԱՀԸ…

Բովանդակային առումով նովելը քննվում է հետևյալ մոտեցումներով (ուսուցչի ուղղորդմամբ).

1.ԿԻՆԸ (առաջին խումբ)

ա) Կինը և տղամարդը	——	Տղամարդը միջոց է:
բ) Կինը և կյանքը	——	Կյանքը պետք է վայելել:
գ) Կինը և սերը	——	Սերը կյանքը վայելելու միջոց է:
դ) Կինը և միջավայրը	——	Միջավայրը երկդիմի է:

2.ԿՆՈՋ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ (երկրորդ խումբ)

ա) Կնոջ վերաբերմունքը բժշկի խորհուրդների նկատմամբ:

բ) Կյանքը գեղեցիկ է, երբ երիտասարդ ես:

գ) Կյանքն անտանելի է, երբ ծեր ես:

դ) Վերնագրի <<երջանիկ>> և <<մահ>> հասկացությունների համադրումը:

3.ԱՆՀԱՏԸ ԵՎ ՄԻՋԱՎԱՅՐԸ (երրորդ խումբ)

ա) Միջավայրի տեսանելի վերաբերմունքը անհատի նկատմամբ:

բ) Միջավայրի անտեսանելի վերաբերմունքը անհատի նկատմամբ:

գ) Անհատի հակադրությունը միջավայրին:

Անհատի և միջավայրի հակադրությունը լավ է արտահայտված հայ գրականության մեջ, ներառարկայական կապի ստեղծումը հանձնարարվում է չորրորդ խմբին. Ե. Չարենց. «Երբ էս հին աշխարհը մտա…», « Տաղ անձնական», Պ. Դուրյան. «Լճակ» և այլն: Նշված բանաստեղծությունների և նորավեպի համեմատական ուսումնասիրությունը լավագույնս ցուցադրում է անհատի և հասարակության հակասությունը, հասարակության անտարբերությունը անհատի ապրումների նկատմամբ:

Աշակերտների համար աշխատանքը հետաքրքիր է, մոտեցումը՝ նոր, ուստի նրանք ոգևորված, իրենց հատուկ խանդավառությամբ ներկայացնում են առաջադրանքները՝ իրենց դիտարկումներն ապացուցելով ոչ միայն նորավեպից, այլև իրական կյանքից վերցրած օրինակներով:

Իրականացվում է նաև միջառարկայական կապ՝ արևմտահայերենին բնորոշ բառապաշարային, քերականական, ոճական իրողությունների պարզաբանման նպատակով: Այսպես.

1.Բացատրվում են արևմտահայերենի բառապաշարին հատուկ բառերը:

Օրինակ՝ վայրկյան-րոպե

աղվոր- գեղեցիկ

պարապ տեղը –իզուր

երկվայրկյան- վայրկյան

անիկա- նա, այն և այլն:

2. Հիշեցվում են արևմտահայերենին հատուկ ձևաբանական որոշ դրսևորումներ, երբ հոգնակի դարձնելիս, հոլովելիս գոյականի հիմքը չի հնչյունափոխվում, կան հոգնակիի կազմության տարբերություններ.

Օրինակ՝ կին- կիներ- կիներու

մահ –մահեր-մահերու

գիրկ- գիրկին

բույն- բույնին

երկուսս էլ- երկուքն ալ

կ'ըսեին –ասում էին և այլն:

3.Մեկնաբանվում են պատկերավորման-արտահայտչական միջոցները. այստեղ՝ համեմատություն, փոխաբերություն, մակդիր, պարադոքս և այլն:

Օրինակ՝Անիկա իր հոգին ավանդեց, գլուխը իր սիրած տղուն գիրկին մեջ, նույնիսկ իր բույնին մեջ նետահար սպանված թռչունի մը պես, բաժակի մը պես, որ կոչունքի մը սեղանի վրա, ցնծության մաղթանքներու, բախումներու մեջ կը փշրվի, փոխանակ դուրսը սպասավորներու ձեռքով, լվացքին աղտոտ ջուրին մեջ:

Թռչունի մը պես- համեմատություն

Երջանիկ մահ, քաղցր մահ - պարադոքս:

Լանջքին կոհակներ, կենցաղին ավերումներ – փոխաբերություն:

Նրբամիտ ընկերություն, հալածիչ լուսին – մակդիր և այլն:

4. Որպեսզի ինքնանպատակ չլինի, առաջարկվում է , որ աշակերտը իր անձը կապի նովելի հերոսուհու արարքի կամ դեպքի հետ (օգտագործում է <<Կրկնակի գրառումների օրագիր>> մեթոդը)՝ քննելով և' իր, և' հերոսուհու ներաշխարհը, որ նա իրական կյանքից վերցրած կին է և սիրում է կյանքը, նրա օրինակով քննի իր արարքը՝ մարդու ինքնադատիարակումը (սա տեքստի անհատական ընկալումը խթանող սկզբունքն է):

Քննարկվում է նաև հերոսուհու անանուն լինելը: Դրանով հեղինակն ուզում է ասել, որ իր նկարագրած բնավորությունները, ճակատագրերը ընդհանուր են շատերի համար:

Նշված փուլերն անցնելուց հետո հանձնարարվում է աշակերտներին, որ տեքստից գտնեն ընդհանրացնող եզրահանգումը և մեկնաբանեն: Նրանք հեշտությամբ գտնում են այն, որն է՝

«Կինը ժպիտ մըն է, պետք չէ, որ ան փոխվի լացի»:

Հարցերով ամփոփվում է դասը, կատարվում է անդրադարձ և հանձնարարվում տնային առաջադրանք. շարադրություն՝ «Երջանկության իմ պատկերացումը» վերնագրով:

4.ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գր. Զոհրապի նորավեպերում ներկայացվում են այնպիսի դեպքեր, իրադարձություններ, որոնք հասարակական հնչեղություն չունեն, սակայն հասարակության կյանքի բաղադրիչները լինելով՝ շատ դեպքերում որոշում են անհատի ճակատագիրը: «Երջանիկ մահը» այն նորավեպերից է, որոնցում գրողը, իր հռչակած «կյանքն ինչպես որ է» սկզբունքին հավատարիմ, ներկայացնում է մարդու ներաշխարհը, հոգեբանությունը, մարդկային հարաբերություններն այնպես, ինչպես դրանք կան՝ ցուցաբերելով հոգեբանին բնորոշ դիտողականություն: Զոհրապը քննում է որոշակի իրավիճակում հայտնված մարդու հոգեվիճակը և այդ ճանապարհով բացահայտում մարդու ողբերգության հասարակական դրդապատճառները: Դա նշանակում է, որ գրողը աննշան, հասարակության կողմից ուշադրության չարժանացող **կոնկրետ** իրավիճակի քննությամբ հասնում է հոգեբանական և հասարակական բովանդակային մեծ **ընդհանրացման**՝ հասկացնելով, որ հենց այդպիսի աննշան իրողություններն են որոշում մարդու կենսակերպի բնույթը:

Ուսուցման մեր փորձը ցույց է տալիս, որ այսպիսի ստեղծագործությունների արդյունավետ ուսուցումը պահանջում է ուշադիր ու մանրակրկիտ աշխատանք, մեթոդների ճիշտ ընտրություն, աշակերտներին վերլուծությունների ընթացքում կողմնորոշելու և ինքնուրույն դատողություններ անելու ունակությունների խթանում: Առավել ևս, որ նորավեպի տեքստային, գեղարվեստական ու կառուցվածքային առանձնահատկությունները շատ հաճախ բնութագրվում են մանրամասների բացակայությամբ: Մասնավորապես

1.տեքստը իրադարձություններով հարուստ չէ,

2.գործողությունը արագ ու անսպասելի զարգացում է ունենում,

3.հերոսների քանակի և խոսքի սակավություն կա:

«Երջանիկ մահը» նորավեպն ունի ևս մեկ կարևոր առանձնահատկություն՝

4.հերոսուհին ավելի շատ ներկայացվում է ուրիշի (բժշկի) կողմից, քան ներկայանում է ինքը:

Մեր բազմամյա աշխատանքի ընթացքում բազմիցս համոզվել ենք, որ որևէ գեղարվեստական ստեղծագործություն վերլուծելիս նախնառաջ պետք է մշակել այն սկզբունքների համակարգը, որը թույլ կտա վերլուծության ձևաչափի (մոդելի, կաղապարի) ճիշտ ընտրություն կատարել: Մեր կարծիքով՝ այդ համակարգը երեք սկզբունք-բաղադրիչ ունի.

1.Տեքստային-կառուցվածքային վերլուծության սկզբունք-բաղադրիչ (ստեղծագործության ձևական կողմ): Այսպիսի վերլուծության ժամանակ կարելի է որոշել ստեղծագործության սեռաժանրային առանձնահատկությունները, գլուխները, մասերը, պարբերությունները, նախադասությունները և նույնիսկ այն բառերն ու արտահայտությունները, որոնք կարևոր դեր կարող են խաղալ բովանդակային վերլուծության ժամանակ:

2. Բովանդակային վերլուծության սկզբունք-բաղադրիչ (ստեղծագործության իմաստային կողմ): Այս վերլուծության ժամանակ որոշվում է ստեղծագործության գաղափարական միտումը, ներկայացվում են կերպարների բնութագրերը, նրանց արարքների դրդապատճառներն ու հետևանքները, կատարվում են հասարակականորեն արժևորված հետևություններ և ընդհանրացումներ:

3.Լեզվառճական վերլուծության սկզբունք-բաղադրիչ: Այսպիսի վերլուծության ժամանակ ուսումնասիրվում են ստեղծագործության բառապաշարը, գեղարվեստական պատկերավորման արտահայտչամիջոցները, լեզվական-քերականական իրողությունները, որոնք որոշակիորեն նպաստում են ստեղծագործության բովանդակային կողմի բացահայտմանը՝ կերպարների բնութագրումներ, իրադարձությունների գնահատումներ, երևույթների պատկերավոր-իմաստային նկարագրություններ և այլն:

Այնուհետև մենք կարևորել ենք վերլուծական-հետազոտական այն մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս ապահովելու վերլուծության համակողմանիությունը: Դրանք ընդհանրական մեթոդներ են, որոնք օգտագործվում են բոլոր գիտություններում, սակայն յուրաքանչյուր դեպքում ցուցաբերվում են միայն տվյալ գիտությանը հատուկ մոտեցումներ:

1.Ինդուկցիոն (մակածման) մեթոդ: Այս մեթոդի կիրառումը հնարավորություն է տվել վերլուծությունն իրականացնել խոսքային նվազագույն

միավորից՝ բառից, դեպի առավելագույն միավորը՝ տեքստը, ուղիով: Ուշադրություն է դարձվում բառերի, բառակապակցությունների, նախադասությունների լեզվական, ոճական, քերականական այն առանձնահատկությունների, դրանց միջև եղած ներքին կապերի վրա, որոնցով պայմանավորվում է բովանդակային վերլուծության ընթացքը:

2.Դեդուկցիոն (արտածման) մեթոդ: Այս մեթոդի կիրառման ժամանակ ուշադրությունը կենտրոնացվում է առանձին երևույթների կամ կերպարների մեկնաբանման վրա: Մասնավորապես այս նորավեպում ուշադրության կենտրոնում կինն է, որը ոչ միայն կանանց ընդհանրացված կերպար է, այլև անհատ, որը որոշակի հարաբերությունների մեջ է գտնվում միջավայրի հետ:

Այս երկու մեթոդները սերտորեն կապված են միմյանց. տեքստը մասնատելու և ապա մաս առ մաս հավաքելու գործընթացը հնարավորություն է տալիս աշակերտներին ինքնուրույն հասկանալու և գնահատելու յուրաքանչյուր բառի, նախադասության, հատվածի նշանակությունը տեքստի բովանդակության և կերպարների լիարժեք ներկայացման ու մեկնաբանման առումներով:

Պետք է ասել, այնուամենայնիվ, որ այս հետազոտական մեթոդների կիրառությունը դեռևս բավարար չէ գեղարվեստական երկի ուսումնասիրության տեսակետից: Սրանց ընդհանրական բնույթը թույլ չի տալիս հանգամանորեն անդրադառնալու գեղարվեստական մանրամասներին, որոնք շատ ավելի կարևոր դեր կարող են խաղալ երկի գաղափարական բովանդակության բացահայտման տեսակետից: Ուստի սպառիչ վերլուծություն ապահովելու նպատակով կիրառել ենք այլ կոնկրետ տեխնոլոգիաներ և մեթոդներ:

1.Զրույցի մեթոդ: Զրույցի միջոցով վերհիշում ենք նախորդ դասարաններում և դասերին անցած այն նյութերը, որոնք այս կամ այն կերպ առնչվում են ուսումնասիրվող նորավեպի հետ (ժանրային առանձնահատկություններ, գեղարվեստական արտահայտչամիջոցներ, գրողական նախասիրություններ և այլն):

2.Մտագրոհի մեթոդ: Այս մեթոդի կիրառումը նպատակ ունի պարզելու աշակերտների՝ տեքստը ընկալելու և հասկանալու մակարդակը: Այս դեպքում աշակերտները փորձում են պատճառաբանել վերնագրում և ապա տեքստում

հանդիպող նմանօրինակ արտահայտությունների՝ երջանիկ մահ, քաղցր մահ, գեղեցիկ մահ, հեշտ մահ, բովանդակության և իրականության կապը:

3.Համագործակցային մեթոդ: Աշակերտները աշխատում են խմբերով և ուսումնասիրում են տեքստի առանձին գլուխներ ու պարբերություններ ըստ տրված առաջադրանքների:

4.«Կրկնակի գրառումների օրագիր» մեթոդ: Այս մեթոդի օգտագործումը հնարավորություն է տալիս տեքստային իրավիճակները և կերպարների վերաբերյալ դիտարկումները ինչ-որ կերպ կապել սովորողի հետաքրքրությունների ու կենսափորձի հետ: Այդ դեպքում վերլուծությունները ավելի իրական են լինում:

5.Համեմատական մեթոդ: Այս մեթոդն օգնում է կերպարի, միջավայրի, ժամանակաշրջանի սպառիչ բնութագրերը ներկայացնել համանման այլ իրողությունների համեմատությամբ: Այդ մեթոդով վերլուծություն իրականացվել է Ե.Չարենցի, Պ.Դուրյանի ստեղծագործությունների օգնությամբ, ցույց է տրվել, որ անհատի և միջավայրի փոխհարաբերությունների հարցերը շոշափվել են նաև այլ հեղինակների կողմից ևս այլ ժամանակային կտրվածքում:

6.Դիտման մեթոդ: Գրական երկերի ուսումնասիրությունը առավել արդյունավետ է դառնում, երբ տեքստային վերլուծությունները զուգորդվում են արվեստի այլ տեսակների հետ՝ երաժշտություն, նկարչություն, քանդակագործություն, պար, կինո և այլն: Այսպիսի վերլուծությունների ժամանակ ակտիվորեն «աշխատում են» սովորողների կենսազգացողությունները (կինեսթետիկ զգացողություններ): Նորավեպում նկարագրվող պարը առավել տեսանելի ու ընկալելի կլինի վալս կոչվող պարերի դիտումով. թե՛ երաժշտությունը, թե՛ պարային շարժումները սովորողներին կփոխանցեն այն ալեկոծ հոգեվիճակը, որ ուներ հերոսուհին: Աշակերտներն էլ ներկայացնում են համապատասխան այնպիսի տեսասահիկներ, որոնք որևէ կերպ կարող են կապվել ուսումնասիրվող նյութի հետ (օրինակ՝ այս աշխատանքում օգտագործված երկու նկարները աշակերտների կողմից են ներկայացվել):

Գեղարվեստական ստեղծագործությունների ուսումնասիրությունը դժվար է պատկերացնել առանց ներառարկայական և միջառարկայական կապերի: «Երջանիկ մահը» տալիս է այդ հնարավորությունը:

1.Ներառարկայական կապեր: Անհատի և միջավայրի հակադրությունը աշակերտների 4-րդ խումբը ցուցադրում է Ե. Չարենցի, Պ.Դուրյանի որոշ ստեղծագործությունների զուգահեռմամբ: Այդպիսով նորավեպում առկա միջավայրի պատկերը առավել տիպական է դառնում:

2. Միջառարկայական կապեր: Գեղարվեստական երկերի ուսումնասիրության ժամանակ շատ կարևոր դեր է վերապահվում հայոց լեզվին: Բառապաշարի, քերականական ձևերի հետ կապված իրողությունները շատ կարևոր են՝ բովանդակության և կերպարային յուրահատկությունների խորքը թափանցելու համար: Այս դեպքում նաև մեկ այլ հանգամանք էլ կա. աշակերտները առնչվում են արևմտահայերենի հետ, որը բառապաշարային և քերականական տարբերություններ ունի արևելահայերենի համեմատությամբ: Արևմտահայերենի վերաբերյալ նախորդ դասարաններում յուրացրած թեկուզև շատ նվազ գիտելիքների օգնությամբ աշակերտները հաջողությամբ հաղթահարում են լեզվական «խոչընդոտները»:

Կարևոր դեր է վերապահված նաև ոճագիտությանը: Չկա գեղարվեստական երկ, որ զուրկ լինի պատկերավորման արտահայտչամիջոցներից՝ մակդիր, համեմատություն, պարադոքս, փոխաբերություն և այլն: Այս ուղղությամբ ևս դասարանում աշխատանքներ են տարվում:

Միջառարկայական կապեր են ստեղծվում նաև երաժշտության, կերպարվեստի, պատմության հետ:

5.ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Այսպիսով, «Երջանիկ մահը» նորավեպի ուսումնասիրության ավարտին աշակերտները ձեռք կբերեն հետևյալ կարողունակությունները, որոնք անհրաժեշտ են գրական երկի նպատակային ուսումնասիրման համար:

ա) Գիտելիք

1.կիմանան Գր. Զոհրապի ստեղծագործական մեթոդի առանձնահատկությունների մասին,

2.կիմանան՝ ինչ է նորավեպը, ինչ բնութագրական հատկանիշներ ունի,

3.կիմանան գրական երկի վերլուծության սկզբունքների մասին,

4.կիմանան պատկերավորման արտահայտչամիջոցների մասին,

5.կիմանան վերլուծության ժամանակ օգտագործվող մեթոդների մասին:

բ)Կարողություն

1.կբնորոշի Գր.Զոհրապի ստեղծագործական մեթոդը,

2.կներկայացնի նորավեպի ժանրային հատկանիշները այլ ժանրերի համեմատությամբ,

3.կբացատրի այն սկզբունքները, ըստ որոնց կատարվում է նորավեպի վերլուծությունը,

4.կտարբերակի և կդասակարգի պատկերավորման միջոցները,

5.կմեկնաբանի դեպքերն ու կերպարների վարքագիծը,

6.ձեռք կբերի ինքնուրույն դատողություններ անելու և կարծիք արտահայտելու կարողություն:

գ)Հմտություն

1.կկատարի գեղարվեստական մեթոդների համեմատական քննություն,

2.կկատարի լեզվառճական վերլուծություն,

3.կիրականացնի կերպարների և իրավիճակների վերլուծություն,

4. կհամագործակցի դասընկերների հետ,

5.կարտահայտի սեփական կարծիքը:

6.կտիրապետի կապակցված խոսք կառուցելու հմտությանը,

7.կպատրաստի տեսասահիկներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Դալլաքյան Կ., Գր. Զոհրապ, Երկեր, Երևան, 1989 (ներածական մաս):

2.Զոհրապ Գր., Երկեր, Երևան, 1989:

3.Խաչատրյան Հ., Արտաշես (պատմավեպ), Երևան, 1980:

4.Հայկական սովետական հանրագիտարան, հտ.3, Երևան,1973, հտ 4, Երևան, 1978:

5.«Հայոց լեզու», «Գրականություն», «Հայ գրականություն» հանրակարթական առարկաների չափորոշիչներ և ծրագրեր (նախագիծ):

6.«Հայոց լեզու և գրականություն», թիվ 6, Երևան, 2010:

7.Զրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Երևան, 1972:

8.Տողանյան Ն., Խաչատրյան Հ., Գրականություն (մեթոդական ձեռնարկ), Երևան, 2008:

6.ՀԱՎԵԼՎԱԾ

ԴԱՍԻ ՊԼԱՆ - 1

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Իրինա Ասոյան

Առարկա՝	**Հայ գրականություն**	**Ամսաթիվ**	**17.09.2021**	**Կիսամյակ**	**1**	**Դասարան**	**11**
Թեմա՝	**Գրիգոր Զոհրապ. «Երջանիկ մահը» նորավեպը**						
Օգտագործ-վող նյութեր՝	Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, «Երջանիկ մահը» նորավեպի 4 օրինակ, արևմտահայերեն բառարան						
Դասի նպատակը՝	● Խթանել աշակերտների ընթերցասիրությունը: ● Զարգացնել տեքստ ուսումնասիրելու կարողությունը: ● Տարբերակել բառը, նախադասությունը, պարբերությունը, տեքստը: ● Բացատրել բառը բառակազմորեն, իմաստաբանորեն, ձևաբանորեն և շարահյուսորեն: ● Ներկայացնել նորավեպի կառուցվածքը: ● Ընկալել նորավեպի ենթատեքստը: ● Զարգացնել աշակերտների ինքնուրույն գտնելու, համեմատելու, հակադրելու, վերհանելու, կարծիք կազմելու, ստեղծելու կարողությունը: ● Նկարագրել միջավայրի դիրքորոշումն ու վարքը: ● Նկարագրել անհատի /հերոսուհու/ վարքը: ● Կատարել ներառարկայական և միջառարկայական կապեր: ● Տարբերակել հեղինակի ոճի առանձնահատկությունը: ● Զարգացնել կապակցված խոսք /կարծիք/ գրելու հմտություններ:						
	Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ:						
Վերջնար-դյունքները	Աշակերտը կկարողանա՝ ● ուսումնասիրել տեքստը ինդուկցիոն /մակածում/ մեթոդով, ● ներկայացնել բառի, նախադասության, պարբերության նշանակությունը տեքստի կառուցվածքում, ● վերլուծել բառը բառակազմորեն, իմաստաբանորեն, ձևաբանորեն և շարահյուսորեն, ● ներկայացնել նորավեպի կառուցվածքը / կոմպոզիցիոն կառուցվածք/, ● մեկնաբանել նորավեպի գաղափարը, ● գտնել, համեմատել, հակադրել, վերհանել, կարծիք կազմել, ստեղծել, ● ցույց տալ հերոսուհու հոգեբանական անցումները, ● դիտարկել և գնահատել անանուն հերոսուհու վարքը, ● պարզաբանել ներառարկայական և միջառարկայական կապերի նշանակությունը,,						

	● կարծիք հայտնել հեղինակի ոճի վերաբերյալ, ● կազմել կապակցված խոսք:			
Գործողություններ /ժամ/ տևողություն/	**Ուսումնական գործունեություն** **Աշակերտներ**	**Ուսումնական գործունեություն** **Ուսուցիչ**	**Հարցադրումներ**	**Կիրառվող մեթոդ/ներ/**
Մուտք. ներկա-բացակա /2ր/ **Սկիզբ /5ր/** **Ընթացք /25-30ր/**	Պատրաստվում են նոր դասին. նստում են խմբերով /նախօրոք բաժանված 4 խումբ/, լսում և պատասխանում են նախորդ և նոր դասերի վերաբերյալ հարցերին: Յուրաքանչյուր խումբ, ըստ հանձնարարականի, աշխատում է նորավեպի վրա տեքստի հետազոտման ինդուկցիոն մեթոդով /տանը կարդացել են նորավեպը/. քննարկում են անծանոթ բառերը, բացատրում, ենթարկում բառակազմական և	Հարցեր է ուղղում աշակերտներին հին և նոր դասերի վերաբերյալ, լսում է պատասխանները: Նախքան նորավեպի ուսուցմանն անցնելը դասը սկսում է զրույցով՝ կնոջը ճանաչելու, նրա հոգեբանությունն ուսումնասիրելու	Ո՞վ է Գր. Զոհրապը: Գրական ո՞ր ուղղության հետևորդ է Զոհրապը: Ի՞նչ է նորավեպը: Նորավեպերի քանի՞ ժողովածուն ի Զոհրապը: Ո՞ր ժողովածուի մեջ է մտնում «Երջանիկ մահը»նորավեպը: Ինչպե՞ս եք հասկանում վերնագիրը: Ի՞նչ նշանակություն ունեն բառը, նախադասո	Մտագրոհ Համագործակցային մեթոդ Հետազոտական մեթոդ Ինդուկցիոն մեթոդ Զրույց Ներառարկայական և միջառարկայական կապեր

	իմաստաբանական վերլուծության, արմատներով նոր բառեր կազմում, ընտրում տեքստի հիմնական միտքն արտահայտող նախադասություններ, վերլուծում ձևաբանորեն և շարահյուսորեն: Առաջին, երկրորդ, երրորդ խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները՝ բացահայտելով պարբերություն առ պարբերություն: Չորրորդ խումբը ներկայացնում է հեղինակի ոճի առանձնահատկությունները և նորավեպի կառուցվածքը: Կատարում են եզրակացություն. գուշակում են դասի նպատակները, հեղինակի նպատակները, բացահայտում հերոսուհու կերպարի յուրահատկությունները, կարծիք հայտնում տեքստի ուսումնասիրման այս մեթոդի վերաբերյալ:	վերաբերյալ, կատարում է մեջբերումներ: Կիրառում է մտագրոհ նորավեպի վերնագրի շուրջ /նախօրոք հանձնարարված էր նորավեպը կարդալ/: Նախապես 4 խմբի բաժանված աշակերտներին տալիս է նորավեպի մեկական տպված օրինակ և հանձնարա-ռում աշխատել՝ ըստ մշակված պլանի: Հրահանգում է կիրառել միջառարկայական և ներառարկայական կապեր, ուղղորդող հարցեր է տալիս՝ հեղինակի աշխարհը քայլ առ քայլ թափանցելու համար: Լսում է խմբերի ներկայացրած տարբերակները:	ությունը, պարբերությունը տեքստ ուսումնասիրելիս: Ի՞նչ է ինդուկցիոն մեթոդը, ո՞րն է նրա առանձնահատկությունը: Ո՞րն է նորավեպի ոսկե նախադասությունը: Ո՞րն է հեղինակի ասելիքը: Ի՞նչ առանձնահատկություն ունի հեղինակի ոճը:	

Ավարտ /5ր/		Ներկայացնում է դասի նպատակների և վերջնարդյունքների իր տարբերակը, կիրառված մեթոդի օգտակարությունը տեքստ ուսումնասիրելիս: Կատարում է անդրադարձ և գնահատում:		
Տնային աշխատանք /3ր/	1. Ուշադրություն դարձնել նորավեպի բովանդակությանը և ասելիքին: 2. Գրել կարծիք՝ « Ի՞նչ եմ մտածում հերոսուհու կենսակերպի վերաբերյալ» վերնագրով:			

ԴԱՍԻ ՊԼԱՆ - 2

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Իրինա Ասոյան

Առարկա՝	Հայ գրականություն	Ամսաթիվ	20.09.2021	Կիսամյակ	1	Դասարան	11
Թեմա՝	Գրիգոր Զոհրապ. «Երջանիկ մահը» նորավեպը						
Օգտագործ-վող նյութեր՝	Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, «Երջանիկ մահը» նորավեպի 4 օրինակ, արևմտահայերեն բառարան						
Ամբողջա-կան պատկեր՝	Աշակերտներն արդեն նախորդ դասաժամին ինդուկցիոն մեթոդով ուսումնասիրել են նորավեպը, գիտեն նորավեպի ժանրային և կառուցվածքային առանձնահատկությունները, գրականության տետրում գրել են կարծիք հերոսուհու վարքագծի վերաբերյալ: Տանը պետք է ավելի մանրամասնորեն ուսումնասիրեն տեքստի բովանդակությունը՝ հաջորդ դասն ավելի արդյունավետ անցկացնելու համար: Դասն անցկացվում է համակարգչային սենյակում:						
Դասի նպատակը՝	● Զարգացնել տեքստ ուսումնասիրելու կարողությունը: ● Տարբերակել տեքստի գլուխը, պարբերությունը, նախադասությունը, բառը: ● Կարդալ և վերարտադրել տեքստի /նորավեպի/ բովանդակությունը: ● Ընկալել նորավեպի ենթատեքստը: ● Մեկնաբանել նորավեպում տրված նկարագրությունները՝ օգտագործելով հեղինակի բառերն ու արտահայտությունները: ● Զարգացնել աշակերտների ինքնուրույն եզրահանգումներ կատարելու կարողությունը: ● Ներկայացնել անհատի և հասարակության հակասությունը: ● Բացահայտել հերոսուհու հոգեվիճակը: ● Ձևակերպել կյանքի և մահվան վերաբերյալ հեղինակի տեսակետը: ● Գտնել արևմտահայերենին հատուկ բառերն ու քերականական ձևերը: ● Տարբերակել պատկերավորման-արտահայտչական միջոցները: ● Զարգացնել ստեղծագործական միտքն ու երևակայությունը:						
	Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ:						

Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա՝ ● ուսումնասիրել տեքստը դեդուկցիոն /արտածում, նվազեցում/ մեթոդով, ● մեկնաբանել նորավեպի տեքստը և ենթատեքստը, ● եզրահանգել, արտածել, ● վերարտադրել նորավեպում տրված նկարագրությունները՝ օգտագործելով բառերի ու արտահայտությունների սեփական տարբերակներ, ● բացահայտել կնոջ հոգեվիճակը, ● գնահատել միջավայրի տեսանելի և անտեսանելի վերաբերմունքը հերոսուհու նկատմամբ, ● վերանձնավորել անանուն հերոսուհու կերպարը, ● ձևակերպել կյանքի և մահվան վերաբերյալ սեփական տեսակետը, ● հասկանալ հերոսների արարքների դրդապատճառներն ու շարժառիթները, ● բացատրել արևմտահայերենին հատուկ բառերի և քերականական ձևերի կազմությունն ու նշանակությունը, ● դուրս գրել պատկերավորման- արտահայտչական միջոցները, ● կազմել կապակցված խոսք:			
Գործողություններ /ժամ/ տևողություն/	**Ուսումնական գործունեություն Աշակերտներ**	**Ուսումնական գործունեություն Ուսուցիչ**	**Հարցադրումներ**	**Կիրառվող մեթոդ/ներ/**

Մուտք. ներկա-բացակա /2ր/ **Սկիզբ /5 ր/** **Ընթացք / 25-30ր/**	Պատրաստվում են նոր դասին. նստում են խմբերով /նախօրոք բաժանված 4 խումբ/, քննարկում են տնային աշխատանքները /կարծիքները/: Յուրաքանչյուր խումբ, ըստ հանձնարարականի, աշխատում է նորավեպի վրա տեքստի հետազոտման դեդուկցիոն մեթոդով. կատարում են բառային, քերականական, լեզվառճական, աշխատանքներ, քննում հերոսների արարքների դրդապատճառներն ու շարժառիթները: Նորավեպը բաժանում են մասերի, առանձին մասերի համար կազմում հարցեր և պլան, գտնում նրանց հիմնական նախադասությունները կամ բանալի բառերը:	Հարցեր է ուղղում աշակերտներին գրած կարծիքների վերաբերյալ, լսում է պատասխանները, քննարկում: Առաջարկում է խմբերին նորավեպի բովանդակային վերլուծությունը կատարել համապատասխան մեղեդու, նկարազարդման կամ գունավորման միջոցով: Նախապես 4 խմբի բաժանված աշակերտներին տալիս է նորավեպի մեկական տպված օրինակ և հանձնարա-րում բովանդակային առումով այն քննել առաջարկված մոտեցումներով:	Առաջարկված մոտեցումները՝ 1. Կինը և տղամարդը, կյանքը, սերը, միջավայրը: 2. Կնոջ հոգեբանությունը: 3. Անհատը և միջավայրը: Ի՞նչ իմաստային տարբերություններ կան տեքստից դուրս գրված բառերի արևմտահայերեն և արևելահայերեն տարբերակների միջև: Ձևաբանական ի՞նչ տարբերություններ կան տեքստից դուրս գրված բառերի հոլովման և հոգնակիի կազմության արևմտահայերեն և արևելահայերեն տարբերակներում: Ի՞նչ պատկերավորման-արտահայտչական միջոցներ են կիրառված նորավեպում:	Դեդուկցիոն /արտածման/ մեթոդ Խմբային աշխատանք Կրկնակի գրառումների օրագիր Հետազոտական մեթոդ Դիտման մեթոդ Համեմատական մեթոդ Միջառարկայական և ներառարկայական կապեր Տեքստի անհատական ընկալման սկզբունք

Ավարտ /5ր/	Իրականացնում են միջառարկայական և ներառարկայական կապեր: Անհատապես վերանձնավորում են հերոսուհու կերպարը /Կրկնակի գրառումների օրագիր/: Խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները՝ բացահայտելով նորավեպը գլուխ առ գլուխ տեսասահիկի՝համա պատասխան մեղեդու կամ նկարազարդման միջոցով: Կատարում են եզրակացություն և գտնում նորավեպը ընդհանրացնող նախադասություն-եզրահանգումը: Արտահայտում են իրենց կարծիքը նորավեպի և տեքստի ուսումնասիրման մեթոդի վերաբերյալ:	Լսում է խմբերի ներկայացրած տարբերակները: Ներկայացնում է դասի նպատակների և վերջնարդյունքների իր տարբերակը, կիրառված մեթոդի օգտակարությունը տեքստ ուսումնասիրելիս: Կատարում է անդրադարձ և գնահատում:	Ինչպե՞ս է աշակերտը անհատապես ընկալում հերոսների արարքները: Ո՞րն է նորավեպի ընդհանրացնող մեկնաբանությունը: Ո՞րն է աշակերտի՝ երջակության իր պատկերացումը:	
Տնային աշխատանք/ 2ր/	Գրել շարադրություն՝ «Երջանկության իմ պատկերացումը»վերնագրով:			